Սիփան Ծիրազ

Մի երեկո, որ նման է բոլոր երեկոներին

Քո ոտնահետքերից թափվում են իմ հիշողության մեռյալ
հույզերի տխուր առագաստները:
Քո մազերի մեջ բույն են դրել ծիծեռնակները, որ դեռ չեն
վերադարձել ո՛չ մեր երազների կապույտ քաղաքից, ո՛չ արցունքի միջից այն
ժամանակների, երբ աստղերը մահանում էին ամպերի վրա և գիշերը՝ լույսի մեջ:
Գարնանային հովը սեղմում-սպանում է ինձ՝ բերելով քո
բույրը:
Ես տեսնում եմ քո աչքերը, որ ծածկում են հոգիս, քո աչքերը,
որ սպանել են իմ բոլոր երազները, քո աչքերը, որ ԻՆՁ այստեղ հասցրին:
Մենք բաժանվել ենք վաղուց, իսկ աչքերդ դեռ հսկում են ինձ,
հսկում են հարուստի նման՝ չխնայելով մուրացիկին տրվող մի
կտոր հացն իսկ:
Բայց ես սիրում եմ քեզ: Ես սիրում եմ քո ոտնահետքերը, որ
Աստծո հորինածն են: Չէ՞ որ իմ վերջին շնչում քեզ տեսա, չէ՞
որ աչքերի մեջ բույն են դրել ծիծեռնակները: